

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԷՍԻ ՔԱՌԱՄՆԱՄԵԱՅ ԵՐԹԸ

Հայկազեան Հայագիտական Հանդեսի քառասնամեայ երթին 30րդ հատորը ահա կը դնենք հայագիտական աշխատասեղաններուն:

Կը խորհինք թէ Հանդեսին հրատարակութիւնը իւրայատուկ արտայայտութիւնը հանդիսացաւ Միջին Արեւելքի եւ մանաւանդ Լիբանանի մէջ ծնունդ առած հայագիտական որոնումներուն: Արդարեւ Սփիւռքը իր յետ-եղեռնեան կազմաւորումի առաջին տասնամեակներուն ի մէջ այլոց կրցաւ յառաջացնել մամուլի ու կրթական մարզի, գրականութեան ու մշակոյթի գործընթաց մը, որուն արմատաւորումը զգացնել տուաւ մասնագիտական բնոյթի հրատարակութիւններու անհրաժեշտութիւնը:

Նման յանձնառութեան կենսագործումը պիտի գօտեպնդէր միջին արեւելեան հայագաղութները եւ յաւելեալ մղում պիտի հաղորդէր անոնց գոյատեւման պայքարին: Հայկազեան Հայագիտական Հանդեսը լոյսին եկաւ իր հերթին մասամբ բաւարարելու այդ կարիքը հայագիտական մարզէն ներս: Հայութեան քաղաքակրթական ժառանգին գիտական խորաքափանց ուսումնասիրութեամբ՝ Հանդեսը հայագիտութեան անցեալի փորձը ներկայի ջանքին զօդող եւ ապագան ներկայով երաշխաւորող գործնական միջոց պիտի դառնար:

Հակառակ Լիբանանի քաղաքացիական պատերազմին, որ կրնար արդարացուցիչ պատրուակ հանդիսանալ Հայկազեան Հայագիտական Հանդեսին դադրեցման, վերջինս կարճատեւ ընդմիջումէ մը ետք գոյատեւեց, առաւել ծաղկեցաւ ու ճիւղաւորուեցաւ շնորհիւ իր պատասխանատուներուն եւ խմբագիրներուն համոզուածութեան՝ հանդէպ իրենց ստանձնած առաքելութեան:

Հանդեսը կենսաւորուած է Սփիւռքի միակ հայկական համալսարանին ղեկավարութեան յանձնառութեամբ, հայագիտական ամբիոնով ու հայագիտական գրադարանով:

Համալսարանին հաստատութենական դրուածքը մղում կու տայ Հանդեսին խմբային նախանձախնդիր աշխատանքին ու

հաւաքական աջակցութեան զոյգ սկզբունքներուն գործնականացումին: Ըլլալով ակադեմական կառոյցի մը հրատարակութիւնը *Հանդէտը* կը կիրարկէ շինիչ, ազնիւ, ոչ-այլամերժ եւ յարգալից փոխ-յարաբերութեան գործելաոճը. համահայկական նախանձախնդրութեամբ *Հանդէտը* անխտրական սկզբունք դրսեւորեց ե՛ւ նիւթերուն, ե՛ւ աշխատակիցներուն նկատմամբ՝ վերմնալով ջլատող եւ փլուզող վէճերէ, պայքարներէ, հատուածականութենէ:

Աւելին. ան յառաջադրեց բազմակարծութիւն, սերունդներու երկխօսութիւն, ինչպէս նաեւ հայագիտութեան կեդրոններու եւ մշակներու համապարփակ գործակցութիւն՝ համադրեալ համակարգով եւ Հայրենիք-Սփիւռք կամրջումով:

Հանդէտը չեղաւ հայագիտական ուսումնասիրութեանց սոսկ տեսաբանական հրատարակութիւն, այլ հանդիսացաւ ազգագիտութեան ամբիոն մը:

Հանդէտը որդեգրեց հայագիտութեան այժմեականացման ուղին: Ան հայագիտական ատաղձ նկատեց այն բոլոր նիւթերը, որոնք կ'առնչուէին անցեալի, ներկայի ու գալիքի հայուն ինքնութեան ամենատարբեր երեսակներուն:

Հանդէտը ելակէտային ու համընդգրկուն այս մօտեցումով օժանդակեց որ հայագիտութիւնը ուղղուի ժամանակակից միջմասնագիտական ոլորտ եւ համաշխարհային հասարակագիտութեան կալուածին մէջ ամրապնդուի անոր տեղն ու դիրքը:

Հանդէտը հայագիտութեան բազմաբովանդակ զարգացումով ծաւալեց հայերէն նիւթերու ծիրը: Ան սատարեց նաեւ հայագիր հայագիտութեան պահպանումին եւ աճին: Սա իր հերթին յառաջացուց համապատասխան բառապաշարի օգտագործման անհրաժեշտութիւն, զոր *Հանդէտը* կրցաւ յարաբերաբար բաւարարել, առանց տեղիք տալու արհեստականութեան: Այսպիսով ժամանակակից հայերէնը աւիշ ստացաւ դասական արեւմտահայերէնի բառակերտման եւ բառակազմական աւանդներէն:

Այդուհանդերձ, *Հանդէտը* աւարտած չի նկատեր իր յառաջադրանքները. ան կը շարունակէ յանձնառու մնալ Հայկական Յեղասպանութեան հիմնախնդիրներուն գիտական պաշտպանութեան: Միաժամանակ ան պիտի ձգտի թափ տալ Միջին Արե-

ւելքի հայագաղութներու անցեալի ու ներկայի իւրայատկութիւններու ուսումնասիրական աշխատանքներուն եւ վեր հանել այդ հայագաղութներուն ներդրումը՝ բնական երկիրներուն զարգացման: Զուգահեռաբար, պիտի ջանայ հետազօտել հայրենամերձ այս հայագաղութներու ունեցած ազդեցութիւնը Սփիւքի միւս գաղութներու հայապահպանական ճիգին:

Իր ներշնչումը առնելով վերոյիշեալ մեկնարկային սկզբունքներէն եւ լիբանանահայ գաղութին մէջ ձեւաւորուած հայապահպանական աւանդոյթներէն, աւելի քան տասնհազար էջանի հարուստ բերքով, *Հայկազեան Հայագիտական Հանդէտը* կենսանորոգ աւիւնով կը շարունակէ իր երթը:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ

Հայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կոանեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Արտա Էքմէքճի (ի պաշտօնէ) - Արշալոյս Թովալեան - Արմէն Իւրնէշլեան - Անդրանիկ Տազէսեան (պատասխանատու քարտուղար)

ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐՈՒ ՄԱՐՄԻՆ

Սիլվիա Աճեմեան - Ժիրայր Դանիէլեան - Երուանդ Երկանեան - Հրանոյշ Խառատեան - Մուրատ Հասրաթեան - Հրաչ Զիլինկիրեան - Սկրտիչ Յ. Պուտուրեան - Սեդա Տատոյեան - Սուզըն Փեթի - Պերճ Ֆազլեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀՀՀՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝

Արծուի Բախչինեան

THE FORTY YEAR JOURNEY OF THE *HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW*

Volume thirty of the forty-year old *Haigazian Armenological Review* is now available to students of Armenology.

Through the years, the *Review* has been the original product of the Armenological endeavors of the Middle East in general, and of Lebanon in particular. In its formative years, the Armenian Diaspora produced a journalistic, educational, literary and cultural space which with time grew and necessitated the emergence of more scholarly, professional publications.

The *Review* was published to close a gap and meet a need in the field of Armenian Studies. It was also believed that such a publication would strengthen the Armenian communities of the Middle East and enable them to better preserve their cultural identity. Indeed, in-depth scientific research into the heritage of the Armenian civilization enabled the *Review* to link the past experiences of Armenian Studies to its present endeavors and turn it into a practical means of guaranteeing future Armenian existence.

The Lebanese civil war would have been a valid excuse for discontinuing of this publication. Nevertheless, after a brief interruption, the *Review* re-emerged, grew and further flourished thanks to the conviction of all its stake holders, namely the commitment of the leadership of Haigazian University, the only Armenian university in the Diaspora, its Department of Armenian Studies, its Derian Armenological Library and the members of its editorial group.

The University's endorsement and support provides the *Review* with the thrust to apply these dual principles: team work and group support. Indeed, as the publication of an academic institution, the *Review* has adopted a constructive, sincere, respectful and tolerant approach. As a pan-Armenian *Review*, it neither discriminates against topics nor contributors and remains above divisive arguments, quarrels and factionalism.

Moreover, the *Review* promotes plurality, dialogue among generations and cooperation of both the centers of Armenian studies and students of Armenology, in an integrated framework that connects both the Diaspora and Armenia.

The *Review* is not merely a theoretic publication of Armenian Studies. Rather it has become a research venue for the study of the Armenian nation. Furthermore, it has adopted the policy of making room within Armenology for the study of current Armenian affairs. It has considered as Armenological primary material all that is related to any aspect of the past, present or future of the Armenian identity in its broadest aspect.

Through this initial comprehensive approach, the *Review* assisted in directing Armenology to its current inter-disciplinary dimension and helped in consolidating its place and position in the world of social studies.

The *Review* also expanded the field of Armenian studies in the Armenian language and supported its development and preservation. This in turn created the challenge to develop a relevant, corresponding terminology which the *Review* addressed in quite a satisfactory manner. Thus, contemporary Armenian, when formulating new words, was nourished by the traditions of classical western Armenian

Nonetheless, the *Review's* Editorial Board by no means considers that it has overcome all its challenges. For it continues to remain committed to the scientific defense of the core issues of the Armenian Genocide. Concurrently, it will continue to pursue the study of the specific and unique characteristics of the Armenian communities of the Middle East and their contribution to the development of their adopted respective countries. In parallel, it will work towards researching the influence of these communities, geographically located relatively close to Armenia, on the preservation efforts of other Armenian communities of the Diaspora.

Inspired by the above-mentioned initiating principles, based on the traditions of the Lebanese-Armenian community, and invigorated by its legacy of over 10,000 pages of Armenological material, the *Haigazian Armenological Review* continues its academic journey.

EDITOR IN-CHIEF

The Very Rev. Father Antranik Granian

EDITORIAL BOARD

Antranik Dakessian (executive secretary) – Arda Ekmekji (ex-officio) – Arshalouyse Topalian – Armen Urneshlian

CONSULTATIVE BODY

Sylvia Agemian – Megerditch H. Bouldoukian – Seta B. Dadoyan – Berj Fazlian – Murad Hasratian – Hranush Kharatian – Susan Pattie – Jirayr Tanielian – Hratch Tchilingirian – Yervand Yerkanian

Representative in Armenia

Artsvi Bakhchinyan

